Հիսո՛ւս, (8)
Ալելուիա՛, (6)
Ի՜նչ մեծ ես Դու, (6)
Քոնն է ողջ փառքը, Քոնն է պատիվը: (2)
Հզոր Արքա՝ Սուրբ և Սքանչելի,
Փառաբանում ենք Քեզ, ո՛վ Տեր,
Բարձրացի՛ր մեր մեջ, ո՛վ Պաշտելի,
Հիսո՛ւս (3), ի՛մ Փրկիչ:

***

1. Տեսե՛ք, մարդի՛կ, Գողգոթայում
Անմեղ Գառին, որ խաչվեց,
Հայրը զոհեց Միակ Որդուն,
Ինձ և քեզ կյանք պարգևեց:
Օվսաննա՛, Օվսաննա՛,
Խաչի վրա Նա մեզ ներեց,
Օվսաննա՛, Օվսաննա՛,
Աստծո հետ մեզ հաշտեցրեց:

2. Թեև խաչի վրա մահացավ
Եվ գերեզման դրվեցավ,
Երրորդ օրը Քրիստոս հարյավ,
Հոր փառքով մեզ երևցավ:
Օվսաննա՛, Օվսաննա՛
Հարուցյալ Տեր Հիսուսին,
Օվսաննա՛, Օվսաննա՛
Մեր կյանքի միակ հույսին:

3. Դու ես Ալֆան և Օմեղան,
Դու ես Սկիզբը և Վերջը,
Եվ ամեն ոք, որ կլսի,
Թող ասի. « Ամեն, եկո՛ւր»:
Օվսաննա՛, Օվսաննա՛
Մենք սպասում ենք մեր Փրկչին,
Օվսաննա՛, Օվսաննա՛
Մեր Աստծուն, մեր Արարչին: